



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 23/21

20.11.2021թ.

ք. Երևան

«ԹԵՂՈՒՏ ԻՆՎԵՍՏՄԵՆՏՍ ԼԻՄԻԹԵԴ» ընկերությունը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 163-րդ, 171-րդ և 172-րդ հոդվածներին, պրակտիկայում դրան տրված այնպիսի մեկնաբանությամբ, որ վերաքննիչ դատարանի դատական ակտի առկայության պայմաններում գործին մասնակից չդարձված անձը պետք է ներկայացնի վերաքննիչ, այլ ոչ թե վճռաբեկ բողոք:

Ըստ Դիմողի՝ վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայումը խնդրահարույց է Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից, մի քանի պատճառաբանությամբ.

- նախևառաջ, քանի որ համապատասխան գործի շրջանակներում նախկինում առաջին ատյանի դատարանի դատական ակտը արդեն իսկ հանդիսացել է դատական վերանայման առարկա, այն այլևս բողոքարկման ենթակա չէ, իսկ վերադաս դատարանների կողմից կայացված դատական ակտը տվյալ գործով վերջնական դատական ակտն է:

Հետևաբար, եթե օրենքով սահմանված պահանջներին բավարարող գործին մասնակից չդարձած անձի բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատական ակտը բեկանի և գործն ուղարկի նոր քննության, ապա առկա կլինեն նույն գործով վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած երկու դատական ակտեր, որոնք իրար կհակասեն (քանի որ նախորդ դեպքում վերաքննիչ դատարանը կամ

անփոփոխ է թողել առաջին աստյանի վճիռը, կամ բեկանել և փոփոխել է այն, իսկ նոր դեպքում բեկանում է ակտը և գործն ուղարկում է նոր քննության):

Կարևոր է ընդգծել, որ վերաքննիչ դատարանի առաջին որոշումը որևէ կերպ չի դադարեցնում իր իրավական գործողությունը, քանի որ օրինական ուժի մեջ մտած, կիրառման ենթակա դատական ակտը շարունակում է իրավական ուժ ունենալ, քանի դեռ այն բեկանված կամ վերացված չէ:

- Մյուս դեպքում, եթե անգամ վերաքննիչ դատարանը գտնի, որ վերանայման ենթակա է ոչ թե առաջին աստյանի, այլ տվյալ գործը քննած վերջին աստյանի կողմից կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, ապա այդ պարագայում խեղաթյուրվում է ստորադասության վրա հիմնված դատական եռաստիճան համակարգի էությունն ու բովանդակությունը, դատական երեք աստյանների միջև ֆունկցիոնալ կապ՝ հաշվի չառնելով դատական երեք աստյանների գործառույթների առանձնահատկությունները, քանի որ փաստորեն վերաքննիչ դատարանը իրավասություն է ունենում վերանայել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարանի որոշումը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 389-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 163-րդ, 171-րդ և 172-րդ հոդվածներին, պրակտիկայում դրան տրված այնպիսի մեկնաբանությամբ, որ վերաքննիչ դատարանի դատական ակտի առկայության պայմաններում գործին մասնակից չդարձված անձը պետք է ներկայացնի վերաքննիչ, այլ ոչ թե վճռաբեկ բողոք:

Վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևալն է.

Գործին մասնակից չդարձած անձինք վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված որոշման, իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելը մերժելու, իրենց ներկայացրած վերաքննիչ բողոքի հիման վրա հարուցված վերաքննիչ վարույթը կարճելու կամ գործի վարույթը կասեցնելու մասին որոշումների, ինչպես նաև սույն օրենսգրքի 383-րդ և 384-րդ հոդվածներով նախատեսված հարցերով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումների դեմ:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 163-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: Օրենքով նախատեսված դեպքերում կարող են ստեղծվել մասնագիտացված դատարաններ:

Սահմանադրության 171-րդ հոդվածի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն դատական աստիճանը, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի, Վճռաբեկ դատարանն է:

2. Վճռաբեկ դատարանը դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով՝

1) ապահովում է օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը.

2) վերացնում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Սահմանադրության 172-րդ հոդվածի համաձայն՝

Վերաքննիչ դատարաններն առաջին աստիճանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական աստիճան են:

Այսպես, Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 389-րդ հոդվածի 3-րդ մասն այն հիմնավորմամբ, որ վերաքննիչ դատարանի դատական ակտի առկայության պայմաններում գործին մասնակից չդարձված անձը պետք է ներկայացնի վերաքննիչ, այլ ոչ թե վճռաբեկ բողոք:

Այսպես, Սահմանադրության 61-րդ հոդվածի և 63-րդ հոդվածի սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում: Նշված որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ իրավական բավարար նախադրյալների ստեղծումն ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը: Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է: Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է

պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հայցը կամ դիմումը դատարան՝ իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: Իշխանության ոտնձգություններից անձի պաշտպանվելու ամենաարդյունավետ միջոցը դատարան դիմելու նրա իրավունքն է, որը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես և բոլոր այլ իրավական պետություններում, ունի սահմանադրական (հիմնարար) իրավունքի բնույթ (ՀՀ Սահմանադրության 18 հոդվածի 1–ին մաս): Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից: Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով: Բացի դրանից, դատական իշխանությունն է, որ անկախ է բոլոր այլ մարմիններից և պարտավոր է վերահսկել իշխանության մյուս ճյուղերին պատկանող բոլոր մարմինների կողմից իրավաչափ գործելու իրենց պարտականության կատարումը, վերացնելով այդ մարմինների այն իրավական ակտերը, գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են անձանց սուբյեկտիվ իրավունքները կամ, այլ կերպ՝ ոտնձգում են Սահմանադրությամբ երաշխավորված իրավակարգի դեմ»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսինքն՝ անձը, դիմելով դատարան, պետք է լիարժեք դատական պաշտպանության իրավունք ունենա, ապահովված լինի արդար դատաքննություն իրականացնելու պետության պարտավորությամբ, իր իրավունքների լիարժեք պաշտպանության լեգիտիմ ակնկալիքով:

Սահմանադրական դատարանը իր մեկ այլ՝ 2015 թվականի փետրվարի 24-ի թիվ ՄԴՈ-1191 որոշման մեջ արձանագրել է. «8. Անձի իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի և վերջինիս՝ իր սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան, օրենքով իրացումը երաշխավորելու, ինչպես նաև դատական ակտերի բողոքարկելիության արդյունավետությունը բարձրացնելու հիմնախնդիրներին սահմանադրական դատարանն անդրադարձել է իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-665, ՄԴՈ-673, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-720, ՄԴՈ-747, ՄԴՈ-752, ՄԴՈ-754, ՄԴՈ-758, ՄԴՈ-765, ՄԴՈ-780, ՄԴՈ-832, ՄԴՈ-922, ՄԴՈ-936 և այլն): Այդ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, ելնելով հատկապես սույն գործով քննության առարկա հարցադրումներից, սկզբունքորեն հանգեցնում են իրավահամակարգային նշանակություն ունեցող հետևյալ եզրահանգումներին.

– դատական ակտերի բողոքարկումն անձի խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության երաշխավորման, ինչպես նաև արդար դատաքննության իրականացման խնդրում առանձնահատուկ ինստիտուտ է,

– բողոքարկման ինստիտուտն իրավական միջոց է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով իրականացնել արդարադատության նպատակները,

– օրենքով նախատեսված կարգով բողոքարկման ենթակա են ինչպես օրինական ուժի մեջ չմտած, այնպես էլ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը (գործով ըստ էության կայացված ակտերը, ինչպես նաև օրենքով թվարկված միջանկյալ ակտերը),

– բողոքարկելի են միջանկյալ դատական այն բոլոր ակտերը, որոնք կարող են կասեցնել կամ խոչընդոտել դատարանի մատչելիության իրավունքի իրացումը, մինչդեռ

բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերն իրենց բնույթով այնպիսին են, որ չեն կասեցնում գործի քննության հնարավորությունը և վերաբերում են գործի քննությունը կազմակերպելու՝ դատավորի հայեցողությանը,

– սահմանված են դատական ակտերը վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքների հիման վրա վերանայելու իրավասություն ունեցող դատարանները, ընթացակարգերը և արդյունքում կայացվող որոշումները,

– օրենքով սահմանված են դատական ակտերի բողոքարկման հիմքերը, այդ թվում՝ դատական սխալի հիմքով,

– գործով ըստ էության կայացված դատական ակտի բեկանման (վերանայման) հիմք կարող է հանդիսանալ ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի միայն այնպիսի խախտումը, որն ազդել է գործի ելքի վրա (հանգեցրել է գործի սխալ լուծմանը), մասնավորապես՝ խոչընդոտել է գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը, խախտել է կողմերի դատավարական իրավունքները, հանգեցրել է արդարադատության սկզբունքների խախտմանը:

Միաժամանակ, ընդհանրացնելով դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման միջազգային իրավական փորձը՝ սահմանադրական դատարանը կարևորել է իրավակարգային այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են.

– մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտումների վերաբերյալ դատական բողոքներն ըստ էության քննության առնելու և դրանց լուծում տալու համար արդյունավետ ընթացակարգերի նախատեսումը, այդ թվում խելամիտ ժամկետներում դատաքննության ապահովումը,

– բողոքների ընդունման և քննության ընթացակարգերի դիտարկումն իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների ապահովման համատեքստում:

Այսպես, գործին մասնակցող անձանց շրջանակն ի սկզբանե որոշվում է ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից, իսկ վերադաս աստիճաններն իրենց իրավասությունների շրջանակներում քննում են ստորադաս աստիճանի դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը: Կարծում ենք, այս տրամաբանությունից ելնելով է, որ օրենսդիրը նախատեսել է, որ գործին մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ, ունեն վերաքննիչ բողոքարկման իրավունք և վճռաբեկ

բողոքարկման իրավունքից կարող են օգտվել այն դեպքերում, երբ արդեն իսկ իրացրել են իրենց վերաքննիչ բողոքարկման իրավունքը:

Գործին մասնակից չդարձած անձի բողոքի հիման վրա վերաքննիչ դատարանը առաջին ատյանի դատական ակտը բեկանում և գործն ուղարկում է նոր քննության (ինչն անխուսափելի է, եթե բողոք բերող անձը համապատասխանում է գործին մասնակից չդարձած անձի բոլոր հատկանիշներին և պահպանել է օրենքով սահմանված ժամկետը), սակայն այլ է վիճակը, երբ վերաքննիչ դատարանը վերացնում է իր կողմից արդեն իսկ վերանայված գործ, ստացվում է, որ օբյեկտիվ իրականության մեջ առկա է լինում նույն գործով առաջին ատյանի դատարանի կողմից կայացված նույն դատական ակտի վերանայման երկու արդյունք՝ վերաքննիչ դատարանի երկու որոշում: Ավելին, եթե մինչև գործին մասնակից չդարձած անձի բողոքը ներկայացնելը վերաքննիչ դատարանն առաջին ատյանի կայացրած դատական ակտը նույնն է թողել կամ փոփոխել է, ապա նույն գործով վերաքննիչ դատարանի դատական ակտերը կարող են ունենալ տրամագծորեն հակառակ եզրահանգումներ:

Առավել խնդրահարույց է այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը գտնի, որ վերանայման ենթակա է տվյալ գործը քննած վճռաբեկ դատարանի կողմից կայացված օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, տվյալ դեպքում խաթարվում է եռաստիճան դատական համակարգի էությունն ու բովանդակությունը, քանի որ տվյալ դեպքում վերաքննիչ դատարանն իրավասություն է ունենում վերանայել վճռաբեկ դատարանի որոշումը: Այսինքն՝ խախտվում է դատարանների աստիճանակարգությունը:

Սահմանադրական դատարանն իր՝ 06.10.2015թ. ՍԴՈ-1231 որոշմամբ արձանագրել է. «Դատական ատյանների աստիճանակարգությունն առաջին հերթին կոչված է ապահովելու դատական ակտերի օրինականության և հիմնավորվածության վերահսկողությունը վերադաս դատարանների կողմից, դատական սխալների ժամանակին ուղղումը, որն էլ երաշխավորում է ֆիզիկական և իրավաբանական անձանց օրինական շահերի և իրավունքների առավել պաշտպանությունը»:

Գործին մասնակից չդարձած անձը դատական ակտը կարող է բողոքարկել Օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով: Օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանի վճիռների և Օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված որոշումների դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն գործին մասնակից չդարձած անձինք, որոնց իրավունքների և

պարտականությունների վերաբերյալ կայացվել է դատական ակտ: Գործող իրավակարգավորումները նշված անձանց բողոքարկման իրավունքի որևէ սահմանափակում կամ վերապահում չեն նախատեսում նաև կախված այն հանգամանքից, թե առաջին ատյանի դատարանի բողոքարկվող դատական ակտը վերադաս դատարանի վերանայման առարկա դարձել է, թե ոչ:

Վերոգրյալից ելնելով՝ հանգում ենք այն եզրակացության, որ գործին մասնակից չդարձած անձինք իրական հնարավորություն ունեն վերաքննության կարգով բողոքարկել այն դատական ակտերը, որոնք նախկինում անփոփոխ են թողնվել կամ փոփոխվել են վերաքննիչ և նույնիսկ վճռաբեկ ատյանների կողմից: Եվ եթե պահպանված են նշված անձանց բողոքին ներկայացվող բովանդակային ու ձևական պահանջները, վերաքննիչ դատարանը պարտավոր է բեկանել բողոքարկվող դատական ակտը և գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության:


Չնայած այն հանգամանքին, որ նման իրավիճակը չի համապատասխանում վերջնական դատական ակտերի իրավական որոշակիության և դատական ատյանների գործառույթային տարանջատման ապահովման պահանջներին, խաթարում է դատական համակարգի աստիճանակարգությունը, այնուամենայնիվ, անձանց իրավունքների տեսանկյունից՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները ապահովված են գործող կարգավորումներով: Անձը ցանկացած պարագայում հնարավորություն ունի իր խախտված իրավունքների պաշտպանության համար Օրենսգրքով սահմանված կարով և ժամկետներում դիմել վերաքննիչ դատարան, որն էլ իր հերթին պարտավոր է բողոքն ընդունել վարույթ, եթե պահպանված են բողոքին ներկայացվող բովանդակային և ձևական պահանջները, բեկանել բողոքարկվող դատական ակտը և գործն ուղարկել ստորադաս դատարան նոր քննության:

Հաշվի առնելով ամբողջ վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ վերջնական դատական ակտերի որոշակիության ու կայունության և դատական համակարգի աստիճանակարգության սկզբունքի ապահովման տեսանկյունից գործող կարգավորումները խնդրահարույց են և պահանջում են համակարգային օրենսդրական լուծումներ, ինչն Ազգային ժողովի լիազորությունների տիրույթում է, մյուս կողմից՝ նման կարգավորումը, ամեն դեպքում, ապահովում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի և 63-րդ հոդված 1-ին մասի պահանջները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 389-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ, 163-րդ, 171-րդ և 172-րդ հոդվածներին:

Համակարգող՝

 Recoverable Signature

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169